

Սուբյեկտի գործունեության առանձնահատկությունները ռիսկային իրավիճակում

Աննա Գրիգորյան

Հանգուցային բառեր. սոցիալական ռիսկ, ռիսկային իրավիճակ, ռիսկի սուբյեկտ, սուբյեկտի վարքագիծ, սոցիալական գործոն, սուբյեկտի ընտրություն, այլընտրանքային լուծում, այլընտրանքային իրավիճակ

Սոցիալական ցանկացած մակարդակում մարդկային գործունեությունը պայմանավորված է որևէ աստիճանի ռիսկով: Դա ազատ ընտրության հետևանքներից մեկն է: Առանց ռիսկի հնարավոր չէ առաջընթաց, քանի որ ռիսկի դիմողը ապագայի ինչ-որ մի պահի ակնկալում է որևէ դրական փոփոխություն՝ գիտակցելով նաև դրա բացասական լինելու հնարավորությունը: Ակնկալիքի իրական դառնալը, նպատակների իրականանալը բնականաբար մարդուն բերում է որոշակի առաջընթացի, և այդ առաջընթացն ավելի բուռն է դրսևորվում, երբ ստանում է համահասարակական բնույթ, քանի որ ազգովին ինչ-որ մի նպատակ իրականացնելը, ազգովին սպասածի, ակնկալելի իրականանալը տեսնելը, դրա պտուղները վայելելը ազգին բերում է նրան, որ այն արդեն սկսում է հավատալ իր ուժերին և ապագայի վերաբերյալ հետագա պլաններ նախագծում: Եվ այս ամենը, դրական փոփոխություններ բերելով, ապահովում է առաջընթաց, և այդ առաջընթացի ապահովման գլխավոր երաշխիքը ռիսկը ճանաչելն ու կառավարել կարողանալու ունակությունն է:

Քաղաքակրթության մեջ մարդկային գործունեությունը միշտ էլ կապված է եղել ամենատարբեր ռիսկերի հաշվարկման հետ: Մակայն գիտելիքի կտրուկ դինամիկան և հասարակական հարաբերություններում անորոշության աճի գործընթացներն այսօր արդեն այնքան բնութագրական են, որ նույնիսկ հիմնավոր գիտական կանխատեսումներն ու կանխորոշումներն ավելի շատ ռիսկ են պարունակում քան հավաստիություն [1, 3-6]: Հասարակության այս կամ այն փոխակերպումը, այս կամ այն սոցիալական որոշումը միշտ էլ ենթադրում է ռիսկի որոշակի չափաբաժին: Եվ այս տեսանկյունից ռիսկը բնորոշ է նաև անցումային հասարակությանը, որը, բացի իր ընդհանուր և պարզ բնութագրից, ըստ որի՝ այն հասարակության այնպիսի վիճակ է, երբ համակարգային հին որակական որոշակիությունը խախտվել է, իսկ նորը դեռևս չի ձևավորվել, մասնագիտական գրականության մեջ գոյություն ունեն նաև պրոբլեմի այլ մեկնաբանություններ:

Սոցիալական ռիսկի ճանաչողության և բովանդակության վերլուծությունը, նրա դերը հասարակական կյանքում ենթադրում է սուբյեկտի գործունեության յուրահատկության պարզաբանումը ռիսկային իրավիճակում:

Տվյալ համատեքստում սուբյեկտը ներկայանում է որպես առարկայական-գործնական և ճանաչողության կրողը, ակտիվության աղբյուր, ուղղվածություն

դեպի օրյեկտ: Ներկայումս մասնագիտական գրականության մեջ ընդունված է, որ առանց լուծումների և դրանց իրականացման ռիսկ գոյություն չունի: Այս պատճառով սահմանումները կոնկրետացնելու համար հարկավոր է դիմել սուբյեկտի ակտիվությանը: Ռիսկի սուբյեկտ ասելով, որպես կանոն, հասկացվում են բոլոր մասնակիցները՝ անհատները, փոքր ու մեծ խմբերը, կազմակերպությունները, սոցիալական հասարակություններն ու ողջ հասարակությունը: Ռիսկն առանց իր սուբյեկտի չի լինում: Միևնույն իրավիճակում տարբեր սուբյեկտներ իրենց յուրաքանչյուրների պատճառով կարող են տարբեր ձև վարվել: Ռիսկի դրսևորմանը նպաստող գործոնը հանդիսանում է օբյեկտիվորեն գոյություն ունեցող անորոշությունը, որը պայմանավորված է սոցիալական կյանքի ոչ միանշանակությամբ, երևույթների սպոնտանությամբ, որոշումների կայացման և իրականացման ռեսուրսների սահմանափակությամբ, շրջակա իրականության ոչ լրիվ ճանաչողությամբ:

Սուբյեկտիվորեն իրադրության բացարձակ անորոշությունը նշանակում է բացարձակ ռիսկ՝ ամեն ինչ թողնված պատահականությանը: Ռիսկի չափն աճում է նպատակին հասնելու հավանականության նվազման և սխալների արդյունքում ծախսերի աճման հետ: Տվյալ դեպքում մարդկային գործունեության ռիսկային բնույթը ուսումնասիրելիս հատկապես կարևոր նշանակություն է ստանում «ռիսկի շեղում» երևույթի ուսումնասիրությունը: «Ռիսկի շեղում» երևույթի էությունը նրանում է, որ որոշումը խմբային սուբյեկտի մակարդակում կապված է ավելի մեծ ռիսկի հետ, քան անհատական որոշումն է: Գոյություն ունեն այս երևույթը բացահայտող մի քանի հիպոթեզներ: Խմբակային քննարկումը ծնում է էմոցիոնալ շփումներ խմբի անդամների միջև և բերում է նրան, որ առանձին անհատը ավելի քիչ պատասխանատվություն է վերցնում ռիսկային որոշման համար, քանի որ այն մշակվում է ամբողջ խմբի կողմից: Կարելի է ասել, որ ռիսկը բաշխվում է խմբի անդամների միջև, և դրանով իսկ ապահովում է խմբի մեջ մտնող յուրաքանչյուր անհատի վրա ընկնող ռիսկի փոքր չափաբաժինը, սակայն նրանք պետք է գիտակցեն, որ իրենցից յուրաքանչյուրը պատասխանատու է ամբողջ խմբի կողմից գործադրված ռիսկի համար, որովհետև, եթե չլիներ կոնկրետ տվյալ անհատի կողմից գործադրված ռիսկը, ապա ամբողջը որպես այդպիսին չէր լինի: Այսինքն՝ սեփական ռիսկի ներդրմամբ ապահովվում է խմբակային ռիսկի ամբողջականությունը: Խմբակային քննարկումը մեղմացնում է խմբի անդամների տագնապը ռիսկային իրավիճակում: Հետևաբար, եթե ենթադրյալ ռիսկային որոշումը բերում է անհաջողության, ապա անհատը մենակ չի կրի պատասխանատվությունը, այլ այն կտարածվի խմբի բոլոր անդամների վրա: Այս դեպքում գործում է հիպոթեզի «պատասխանատվության դիֆուզիան»: Խումբը որոշում է ընդունում ռիսկի ավելի բարձր մակարդակով, քանի որ դրա պատասխանատվությունը բաշխվում է խմբի բոլոր անդամների միջև, և դա նվազեցնում է անհաջողության վախը: Խմբակային ռիսկի վերջնական աստիճանը կարող է պայմանա-

վորված լինել խմբի լիդերի ազդեցությամբ: Այս վարկածը ելնում է նրանից, որ ինֆորմացիայի փոխանակման հետևանքով քննարկման ընթացքում տեղի է ունենում փոփոխություն, որի ընթացքում անդամները, որոշումներ ընդունելով, ձգտում են նմանվել խմբի վճռական առաջնորդին [2, 56]:

Ներկայումս «ռիսկի շեղման» ամենատարածված մեկնաբանությունը ռիսկը որպես արժեք բացատրող հիպոթեզն է: Հիպոթեզը ելնում է այն գաղափարից, համաձայն որի ժողովուրդը արժևորում է ռիսկը, և խմբային իրավիճակներում նրանցից շատերը, այդ թվում և վճռական անհատները ձգտում են ընդունել ավելի ռիսկային որոշում, քանի որ արդյունքում բարձրանում է իրենց կարգավիճակը խմբում: Այս պատճառով խմբակային բանավեճերի պայմաններում նրանք փոխում են իրենց արժեքները ավելի մեծ ռիսկի կողմը: Խմբի կոնկրետ անդամի անվճռականությունը կարող է դառնալ անհաջողության պատճառ, քանի որ այն կարող է սխալ գնահատվել տվյալ խմբում: Հետազոտողների մեծ մասը խմբային որոշումների ռիսկի ավելի բարձր մակարդակի կողմնակից է, սակայն ոչ բոլոր ուսումնասիրողներն են կիսում այն կարծիքը:

Ամեն դեպքում սուբյեկտի կողմից գործունեության այս կամ այն տարբերակի ընտրության վրա ազդում են հետևյալ գործոնները՝ սոցիալական և հոգեբանական: Սուբյեկտի վարքագծի այս կամ այն որոշման վրա ազդող սոցիալական գործոնները ունեն բարդ կառուցվածք: Այստեղ հատուկ դեր ունեն, այսպես կոչված, համասոցիալական իրադարձությունները: Սրանց թվին են պատկանում հասարակության պատմականորեն որոշված կազմակերպական ձևը, նրա սոցիալ-տնտեսական և սոցիալական կառուցվածքը, արտադրողական ուժերը, քաղաքական համակարգը, պետական իշխանության որակական մակարդակը և այլն: Սրանք սուբյեկտի գործունեության իրական ֆոնն են ստեղծում և ցույց են տալիս որոշման ընդունման պրոցեսում՝ ռիսկային երկընտրանքում, այս կամ այն տարբերակի ընտրության ուղղությունը [4, 58]:

Սուբյեկտի սոցիալական նախատրամադրվածությունը ռիսկին կամ ընդհանրապես հրաժարվելը դրանից շատ դեպքերում կախված են արտադրական գործոններից: Սուբյեկտը ամեն դեպքում գործում է արտաքին սոցիալական պայմաններին համապատասխան: Բայց սուբյեկտի ընտրությունը միայն արտաքին հանգամանքներով չի որոշվում: Ընտրությունը ռիսկի այս կամ այն աստիճաններում միշտ կապված է անհատականության, խառնվածքի, հոգեբանական կառուցվածքի հետ: Այստեղ ռիսկային իրավիճակի այլընտրանքի լուծման պրոցեսը կախված է այնպիսի հաստատուն կամային որակներից, ինչպիսիք են վճռակա- նությունը և զգուշությունը:

Սուբյեկտի գործունեության առանձնահատկության ուսումնասիրումը ռիսկային իրավիճակում ունի ոչ միայն տեսական, մեթոդական, այլ նաև պրակտիկ հետաքրքրություններ, քանի որ համապատասխան ձևով ազդելով սուբյեկտի վարքի վրա ընտրության իրավիճակում և ռիսկայնության երկընտրանքների աս-

տիճանի վրա՝ կարելի է արմատավորել համապատասխան ճիշտ մեթոդների կիրառումը հասարակական կյանքում:

Ռիսկի ընդունման հետ կապված գործունեությունը ստեղծում է իրական պայմաններ, նպաստում անհատի կարողության գիտական զարգացմանը:

Ռիսկն ունի բազում չհամընկնող, երբեմն նաև իրար հակասող հիմքեր: Տարբեր մարդիկ տարբեր տեսակետներ են արտահայտում ռիսկ հասկացության վերաբերյալ: Մրանցով է պայմանավորված ռիսկի ներքին հակասականության առկայությունը և ռիսկի սահմանափակումների բազմազանությունը: Այս կապակցությամբ աշխատանքում փորձ է արվում բացահայտել այդ սահմանումների կարևոր կողմերը և տալ դրանց հավաքական բնութագիրը: Իրավիճակը կարող է ինչպես օժանդակել, այնպես էլ խոչընդոտել այն որոշումների իրականացմանը, որոնք ընդունել է սուբյեկտը: Ռիսկային գործունեությունը անորոշ իրավիճակում մի քանի այլընտրանքներից կոնկրետ ընտրություն կատարելու անհրաժեշտությունն է:

Ռիսկային իրավիճակներում սուբյեկտը ներկայանում է որպես առարկայական գործնական գործունեության և ճանաչողության կրող, ակտիվության աղբյուր, ուղղվածություն դեպի օբյեկտ: Ռիսկային իրավիճակներում հնարավոր են ռիսկի շեղումներ, ընդ որում հնարավոր են ցանկալի և անցանկալի շեղումներ, ինչը համապատասխանաբար կարող է բերել դրական ու բացասական հետևանքների: Ռիսկի շեղման հետ կապված՝ հատկապես կարևորվում է այն հանգամանքը, որ խմբակային որոշումների ժամանակ տեղի է ունենում ռիսկի շեղում, այսինքն ընդունվող որոշումների ռիսկայնության ավելացում: Նույնիսկ անվճռական անհատը շատ ավելի վճռական է խմբային որոշումներ ընդունելիս [3, 88]:

Տրամաբանական է, որ սոցիալական ռիսկի ուսումնասիրության ժամանակ պետք է հաշվի առնել նրա բոլոր կողմերը և գործոնները: Քանի որ ռիսկային իրավիճակները հասարակության մեջ անխուսափելի են, ապա խոսքը պետք է գնա անորոշությունների նվազեցման և ռիսկի կարգավորման մասին: Ինչքան անորոշությունը շատ է լինում, այնքան բարձրանում է ռիսկի աստիճանը և հակառակը: Կարելի է ասել, որ մեծ մասամբ անորոշության գոյությունը կապված է ոչ ամբողջական և անբավարար ինֆորմացիայի առկայության հետ: Անցումային հասարակություններում հասարակական գործընթացների գործառնությունը և զարգացումը հաճախ կապված են տարբեր անորոշությունների հետ: Մրանով էլ պայմանավորված է հասարակության մեջ ոչ միանշանակ լուծում ունեցող իրավիճակների առկայությունը: Անցումային հասարակության պայմաններում տրանսֆորմացիոն խնդիրները և նրանց բովանդակային կողմի ուսումնասիրությունները շատ ավելի հրատապ են դառնում, քանի որ այդ հասարակությունն ինքնին սոցիալական մի յուրահատուկ ռիսկային խնդիր է, որի արագ և օպտիմալ լուծումից էլ կախված է համակարգի հետագա ճակատագիրը:

Այն համակարգի ապագա սոցիալական և գործառնական վիճակների ակ-

տուալացման մոդելն է:

Ընդ որում տրանսֆորացիոն խնդիրների լուծման այս կամ այն տարբերակի հավանականության քանակական ու որակական չափը միաժամանակ բնորոշում է «ռիսկային իրավիճակի» բովանդակությունը: Այն մասնավորապես բնութագրվում է երեք հիմնական փոփոխություններով.

1. անորոշության առկայությամբ,
2. սոցիալական այլընտրանքներից մեկնումեկն ընտրելու անհրաժեշտությամբ,
3. ընտրվող այս կամ այն տարբերակի իրականացման հնարավորությունը գնահատելու հավանականությամբ:

Վերոհիշյալ փոփոխությունների հանրագումար կազմող «ռիսկային իրավիճակում» որոշում կայացնող սուբյեկտիվ գործոնի ակտիվության և նպատակամղվածության պրոբլեմը մասնագիտական գրականության մեջ գրավում է առանձնահատուկ տեղ, և դա պատահական չէ:

Եթե հասարակության համեմատաբար կայուն զարգացման փուլում «ռիսկային իրավիճակը» հասարակական կարգը բնութագրող փոփոխականներից ընդամենը մեկն է, ապա անցումային հասարակություններում օրինաչափությունների և առանձնահատկությունների հետագոտություններում ռիսկի պրոբլեմը ձեռք է բերում առանցքային նշանակություն:

Այսպիսով, սոցիալական ռիսկը անցումային հասարակություններում շոշափում է հասարակական կյանքի բոլոր ոլորտները: Եվ հետևաբար, նոր սոցիալ քաղաքական իրողություններին ադապտացվելու անցումային հասարակության գերխնդիրը հանգում է բարոյապես արդարացված նոր այնպիսի սոցիոմշակութային միջավայրի ստեղծմանը, որը կնպաստի ոչ միայն սոցիալ-ինստիտուցիոնալ, այլև էթնոկեցության օպտիմալ գործառնությանն ու ինքնազարգացմանը՝ որակապես նոր համահասարակական փոխազդեցությունների, զարգացող ազատությունների և այս իրողություններով պայմանավորված ամենօրյա ընտրությունների և ռիսկերի անխուսափելիության համատեքստում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Зубков В. И., Риск как предмет социологического анализа, М., 1999.
2. Макаренко В. П., Риск при принятии решений в научной политике, М., 1997.
3. Альгин А. П., Риск и его роль в общественной жизни, М., 1989.
4. Հարությունյան Է., Անցումային հասարակությունը որպես տրանսֆորացիոն գործունեության համակարգ, Երևան, 2000:

Особенности деятельности субъекта в ситуации риска

Григорян Анна

Резюме

Ключевые слова: *социальный риск, ситуация риска, субъект риска, поведение субъекта, социальный фактор, выбор субъекта, альтернативное решение, альтернативная ситуация*

Говоря о субъекте риска, как правило, подразумевают всех участников – индивидов, большие и малые группы, а также все общество в целом. Риска без его субъекта не существует. В одной и той же ситуации разные субъекты, вследствие своих особенностей, могут поступать по-разному. Фактором, способствующим проявлению риска, является объективно существующая неопределенность, которая обусловлена неоднозначностью социальной жизни, ограниченностью в принятии решений и ресурсов реализации, недостаточным познанием окружающей действительности.

Абсолютная неопределенность ситуации субъективно означает абсолютный риск, где все возлагается на случайность. Степень риска возрастает по мере снижения шансов для достижения цели и повышения затрат, возникших в результате ошибок. Исследование специфики деятельности субъекта в ситуации риска имеет не только теоретическое и методологическое, но и практическое значение. Деятельность, связанная с признанием рисков, создает реальные условия, способствует развитию научных возможностей личности.

The Peculiarities of the Subject Activities in Risk Situation

Grigoryan Anna

Summary

Key words: *social risk, risk situation, risk subject, subject behaviour, subject option, alternative solution, alternative situation*

At any social level human activity is conditioned by any degree of risk. It is one of the results of free choice. It's quite impossible to make progress without risk, because he who runs risks expects positive changes being fully aware of its possible negative sides. The notion "risk" enables us to operate properly in different conflicting situations.

By saying a risk subject, we mean first all the participants, i.e. individuals, large and small groups, as well as the whole society. There can be no risk, without a subject. At the same time different subjects due to their peculiarities can act in different ways. The factor promoting risk manifestation is considered to be objective ambiguity conditioned by non-unequivocal social life, the limitations of decision-making and realization resources, as well as by non-complete knowledge environment.

The complete ambiguity of the subjective situation means a complete risk i.e, everything is governed by the rule of chance. The degree of risk is increasing in parallel with the reduction of the goal-achievement possibility and the expenditure growth because of mistakes. The study of the subject activity peculiarities in high-risk situations has not only theoretical, methodological, but also some practical interests. Risk activity creates real conditions and promotes the academic development of the individual's capacity.